

# **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

### **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ**

Պառլամենտագիտության մեջ խորհրդարանների իրավասության հետաքրքիր հիմնահարցերից են դրանց լիազորություններն արդարադատության և դատական իշխանության մարմինների պաշտոնյաների նշանակման ոլորտներում: Խորհրդարանի իրավասության բաղադրատարրը կազմող այդ ոլորտի լիազորությունները տարբեր երկրներում տարբեր իրավական ձևակերպումներ են ստացել: Դիտարկելով ընդհանրապես խորհրդարանների լիազորություններն արդարադատության և դատական իշխանության մարմինների պաշտոնյաների նշանակման ոլորտներում, կարելի է առանձնացնել լիազորությունների հետևյալ խմբերը: **Առաջին**, որոշ երկրներում խորհրդարանը կատարում է դատական գործառույթներ՝ հանդես գալով որպես յուրահատուկ դատական կամ քվազի դատական մարմին<sup>1</sup>: Սակայն պետք է նկատի ունենալ, որ խորհրդարանի այդպիսի լիազորությունը բացառություն է: Երկրների մեծ մասում խորհրդարանները նման իրավունք չունեն: **Երկրորդ**, ավելի տարածված է պառլամենտական իմպիչմենտի ընթացակարգը, այսինքն՝ խորհրդարանի իրավունքը կատարված հանցագործությունների համար դատական պատասխանատվության ենթարկել նախագահներին, կառավարության անդամներին, պետության այլ բարձրագույն պաշտոնյաների<sup>2</sup>: **Երրորդ**, խորհրդարանի արդարադատության ոլորտի լիազորությունների դրսևորման յուրօրինակ ձևը քննիչ հանձնաժողովների ստեղծման իրավազորությունն է, ինչպես նաև պաշտոնատար անձանց դեմ դատական մարմինների առջև մեղադրանք հարուցելու իրավունքը<sup>3</sup>: **Չորրորդ**, խորհրդարանների սովորական կամ տարածված լիազորություններից է համաներում հայտարարելու իրավունքը: **Հինգերորդ**, արդարադատության ոլորտին առնչվող խորհրդա-

<sup>1</sup> Այսպես, օրինակ, Բրիտանական Լորդերի պալատը կատարում է երկու կարևոր գործառույթ՝ օրենսդիր և դատական: Իր դատական պարտականությունները Լորդերի պալատն իրականացնում է որպես Մեծ Բրիտանիայի բարձրագույն վերաքննիչ դատական ատյան: Լորդերի պալատը քննում էր նաև համայնքների պալատի բարձրագույն պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված իմպիչմենտի վերաբերյալ գործերը, սակայն 1805 թ.-ից այդպիսի քննություն չի հարուցվել: Լորդերի պալատը որպես առաջին ատյան քննում է պերերի կատարած ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը («հավասարների դատարան» սկզբունքով), սակայն 1948 թ.-ից պերերը զրկվեցին այդ արտոնությունից (տե՛ս **Левина М. И.** Парламентское право Великобритании XVII - начала XIX века. М., 2000, էջ 153):

<sup>2</sup> Տե՛ս "Конституционное право зарубежных стран". М., 2005, էջ 314, **Чиркин В. Е.** Государствоведение, М., 1999, էջ 289:

<sup>3</sup> Տե՛ս **Енгибарян Р. В.** Сравнительное конституционное право. М., 2005, էջ 303:

րանական լիազորություններից է դատական իշխանության և արդարադատության ոլորտին առնչվող մարմինների պաշտոնյաների նշանակման՝ օրենքներով ամրագրված իրավազորությունը:

Այսպիսով, խորհրդարանագիտությանը հայտնի են արդարադատության ոլորտին առնչվող խորհրդարանական հետևյալ լիազորությունները՝ խորհրդարանը որպես դատական ատյան, իմպիչմենտի ինստիտուտ, քննիչ հանձնաժողովների ստեղծում և մեղադրանքի հարուցում, համաներում հայտարարելու իրավունք, ինչպես նաև դատական իշխանության մարմինների ու արդարադատության ոլորտին առնչվող մարմինների պաշտոնյաների նշանակման իրավազորություն: Արդարադատության ոլորտում պետական իշխանության բարձրագույն մարմիններին (օրենսդիր կամ գործադիր, միապետ) բնորոշ լիազորություններից է նաև ներման իրավունքը, որը, որպես կանոն, պետությունների մեծագույն մասում վերապահված է պետության գլխին: Ներման իրավունքը խորհրդարանին վերապահելը, որպես կանոն, բացառություն է ու շատ հազվադեպ:

Մեզ հետաքրքրող հիմնախնդրի հետազոտման համար մեթոդաբանական նշանակություն ունի նաև Ռուսական կայսրությունում թվարկված լիազորությունների բաշխման և իրավական կարգավորման հարցը, որովհետև Հայաստանի առաջին Հանրապետությունը փոխառել էր նախկին մետրոպոլիայի օրենսդրությունը: Ռուսաստանում 1905 թ. հեղափոխության նվաճումներից մեկը 1906 թ. ապրիլի 23-ի «Հիմնական պետական օրենքներ» կոչված սահմանադրական ակտն էր, որով ռուսական բացարձակ միապետությունը վերածվեց սահմանադրական միապետության: Սահմանափակ միապետության կառավարման այդ մոդելն իր հատկանիշներով նմանվում էր դուալիստական միապետությանը: Այդ «Սահմանադրությունը» իրավաբանորեն ամրագրեց իշխանությունների բաժանման սկզբունքը, որում երկպալատանի խորհրդարանը (պետական խորհուրդը և պետական դուման) ուներ միայն մաքուր օրենսդրական և բյուջետային լիազորություններ: Ընդհանրապես խորհրդարաններին բնորոշ մնացած բնույթի լիազորությունները (ներառյալ մեզ հետաքրքրողները), ինչպես նաև գործադիր ողջ իշխանությունը կենտրոնացված էին կայսեր ձեռքում, որին 1906 թ. «Սահմանադրությունը» վերապահում էր «ինքնակալական իշխանություն» (նախկին «անսահմանափակ իշխանության» փոխարեն), իսկ նրա անձը հայտարարվում էր սուրբ ու անձեռնմխելի<sup>4</sup>: 1906 թ. «Հիմնական պետական օրենքների» 23 հոդվածը կայսրին էր վերապահում «դատապարտյալների ներումը, պատիժների մեղմացումը, հանցավոր արարքներ կատարած անձանց ընդհանուր ներումը՝ նրանց նկատմամբ հետապնդումը դադարեցնելով և դատարանից ու պատժից ազատելով, ինչպես նաև միապետական գթասրտության ճանապարհով պետական տույժերի դադարեցումը և ընդհանրապես ընդհանուր օրենքների գործողության տակ չընկնող հատուկ դեպքերում ներողամտության շնորհումը, երբ դրանցով չեն խախտվում՝ այլոց օրենքներով սահմանորոշված օրինական շահերը և քաղաքացիական իրավունքները»: Այսպիսով, Ռուսական կայսրության օրենսդրությունն արդարադատության ոլորտի լիազորություն-

<sup>4</sup> Стѣн "Свод основных государственных законов (1906 г., 23 апреля)" // Титов Ю. П. Хрестоматия по истории государства и права России. М., 1999, էջ 280-284:

ներից ներունը և համաներունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, վերապահում էին միապետին: Այստեղ օրենսդրությամբ չէին նախատեսված ոչ խորհրդարանի, ոչ էլ կայսրի որպես դատական ատյան հանդես գալու լիազորությունը, իմպիչմենտի ինստիտուտը, քննիչ հանձնաժողովների ստեղծումը: Արդարադատության ոլորտի և դատախազական մի շարք պաշտոնյաների նշանակման իրավունքը վերապահված էր միապետին: Այսպիսով, Ռուսական կայսրությունում, որի օրենսդրությունը փոխառել էր Հայաստանի Հանրապետությունը, խնդրո առարկա լիազորություններից ոչ բոլորն էին ամրագրված, իսկ եղածներն էլ վերապահված էին միապետին:

Նոր կազմավորված պետական համակարգում, որը չուներ նշված ոլորտներում պետության գլխի, խորհրդարանի և կառավարության լիազորություններն ամրագրող սահմանադրություն կամ այլ հիմնարար օրենքներ, առաջանում էր թվարկված լիազորությունների վերաբաշխման հարցը, քանի որ հին համակարգում այդ լիազորությունների բաշխումը կատարված էր միապետական կառավարման ձևի մոդելին բնորոշ առանձնահատկություններով: Որպեսզի կարողանանք ցույց տալ այս լիազորություններից յուրաքանչյուրի առկայությունը և կիրառումն Առաջին հանրապետությունում, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրը տնօրինող սուբյեկտներին, անհրաժեշտ է իրականացնել Առաջին հանրապետության խորհրդարանների, կառավարության, արդարադատության նախարարության գործունեության վերաբերյալ արխիվային նյութերի հետազոտություն և համակարգում, այդ լիազորությունները կարգավորող ընթացիկ օրենքների հայտնաբերում և վերլուծություն: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքը հաստատում է, որ Հայաստանի առաջին Հանրապետության երկու խորհրդարաններն էլ չեն դիմել իմպիչմենտի ինստիտուտի կիրառմանը: Այսինքն՝ այդ ինստիտուտը չուներ իրավական ամրագրում և չի էլ կիրառվել երկուսուկես տարվա ընթացքում: Պատճառն այն էր, որ հանրապետությունն ուներ խորհրդարանական կառավարման ձև, որում կառավարությունը քաղաքական պատասխանատվություն էր կրում խորհրդարանի առջև: Այդպիսի պատասխանատվության կիրառումը սովորաբար բացառում է կամ նվազագույնի է հասցնում իմպիչմենտի ինստիտուտը: Այդպիսի նախադրյալներից ելնելով՝ ո՛չ իրական պրակտիկայում, ո՛չ էլ քաղաքական-իրավական գրականությունում ու մամուլում չի քննարկվել իմպիչմենտի ինստիտուտի կիրառման հնարավորությունը:

Ինչպես Հայաստանի խորհուրդը, այնպես էլ պառլամենտն իրենց ի սկզբանե վերապահել են համաներուն հայտարարելու իրավունքը: Չնայած խորհրդարաններն այս իրավազորությունը երբևիցե չեն կիրառել: Դրան հակառակ՝ կառավարությունն այն ժամանակամիջոցներում, երբ օժտված էր օրենսդրական լիազորություններով, մի քանի անգամ ընդունել է համաներման ակտեր<sup>5</sup>: Երկու խորհրդարաններից միայն Հայաստա-

<sup>5</sup> Առաջին հանրապետության գոյության ընթացքում համաներման օրենքներից առաջինը «1919 թ. մայիսի 28-ի ներման հրովարտակն» է (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 114): Այնուհետև մշակվեց «Մայիսի 28-ի ներման հրովարտակն լրացնող օրենքի նախագիծը» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 85): Այդ նախագիծը՝ որպես «Հրովարտակի» օրենսդրական լիազորություններ ունեցող լրացուցիչ հոդվածներ և մեկնաբանություններ Նախարարների խորհուրդն ընդունել է 1919 թ. հուլիսի 8-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 7: Սանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 64-ում):

նի պառլամենտում է շրջանառության մեջ դրվել համաներման օրինագիծ: Օրինագիծը 1920 թ. հունվարին մշակել էր արդարադատության նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետությունը դաշնակիցների կողմից դե ֆակտո ճանաչելու առթիվ (1920 թ. հունվարի 19)<sup>6</sup>: «ՀՀ անկախությունը ճանաչելու առթիվ մեղադրյալներին ներում»<sup>7</sup> շնորհելու մասին» այդ օրինագիծն արդարադատության նախարարը նախարարների խորհրդին ներկայացրել է 1920 թ. փետրվարի 5-ին: Հավանության արժանանալով՝ օրինագիծն օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկվել է խորհրդարան<sup>8</sup>, սակայն ընթացք չի ստացել և չի ընդունվել<sup>9</sup>:

Համաներման երկրորդ ակտն օրենսդիր լիազորություններով օժտված «բյուրո կառավարությունն» ընդունել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին<sup>10</sup>: Համաձայն այդ օրենքի՝ բոլոր քաղաքական հանցագործներն ազատվում էին բանտարկությունից: Ի հարկե, խոսքը մայիսյան դեպքերի կապակցությամբ ստեղծված արտակարգ դատարանների կողմից դատապարտված մեծամասնականների մասին է<sup>11</sup>:

Առաջին հանրապետության օրենսդրական պրակտիկայում, բացի համաներման ակտից, հանդիպում ենք նաև դատավճիռների կատարման կասեցման օրենքի: Այդ օրենքի ընդունման դրդապատճառը պատերազմն էր քենալական Թուրքիայի դեմ: 1920 թ. նոյեմբերի 11-ին Նախարարների խորհրդի գաղտնի նիստում զինվորական նախարարը ներկայացնում է մի օրինագիծ, որով նախատեսվում էր դատապարտված սպաներին ուղարկել ռազմաճակատ<sup>12</sup>: Նախարարների խորհուրդը, լրամշակելով օրինագիծը, հաստատում է այն՝ դրանով ռազմական նախարարին իրավունք վերապահելով նաև այդ ճանապարհով համալրելու բանակը: «Քրեական

<sup>6</sup> Նախագիծն արդարադատության նախարարի հանձնարարությամբ մշակել էր դատական պալատի դատախազը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 28, թթ. 17, 21):

<sup>7</sup> Արդի իրավաբանական եզրութաբանությանը համապատասխան՝ պետք է լինի «ընդհանուր ներում» կամ «համաներում»:

<sup>8</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 24՝ Նախարարների խորհրդի 1920 թ. փետրվարի 5-ի նիստերի օրագիր, թիվ 218: Նույն օրը կառավարությունը որոշել է հանձնարարել զորական նախարարին ներկայացնել համապատասխան օրինագիծ նաև հանցագործ զինվորականների համաներման մասին (տե՛ս ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 24): Արխիվային գործերում պահպանվում է դատապարտված զինվորական անձանց համաներման օրինագիծը, որը մշակել էր ռազմական դատարանի դատախազը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 28, թ. 18): Այս օրինագիծը ևս ընթացք չի ստացել:

<sup>9</sup> «ՀՀ անկախությունը ճանաչելու առթիվ մեղադրյալներին ներում շնորհելու մասին» օրինագծի ընթացք չստանալու պատճառները հնարավոր չէրավ պարզել պառլամենտի նիստերի արձանագրությունների ոչ ամբողջական ու կցկտուր լինելու հետևանքով:

<sup>10</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 351:

<sup>11</sup> Ըստ 1920 թ. հոկտեմբերին կազմված մի տեղեկագրի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 121, թ. 371)՝ մայիսի 13-ից մինչև հոկտեմբերի 15-ը Երևանի արտակարգ դատարան մուտք էր գործել հարյուր չորս քրեական գործ, որոնցով մեղադրանք էր առաջադրվել 183 անձանց նկատմամբ: Վերջնական լուծում էր ստացել 84 գործ, իսկ 99-ը դեռևս գտնվում էր քննության փուլում: Գործերի ընդհանուր քանակից 40-ն էր քաղաքական, որոնցով մեղադրանք էր ներկայացվել 65 անձանց: Դրանցից 14 հոգի արդարացվել էր, իսկ 41-ը դատապարտվել էր զանազան պատիժների, որոնցից մեկը՝ մահապատժի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 116):

<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 255՝ Նախարարների խորհրդի 1920 թ. նոյ. 11-ի նիստի թիվ 35 օրագիրը:

հանցագործների վերաբերմամբ դատարանների որոշումների կատարումն առկայելու մասին» օրենքը<sup>13</sup> ռազմական նախարարին իրավունք էր վերապահում իր հայեցողությամբ քրեական հանցագործությունների համար դատապարտված զինվորների նկատմամբ կասեցնել դատարանների դատավճիռների կատարումը՝ նրանց ուղարկելով ռազմաճակատ: Պատերազմական գործողություններն ավարտվելուց հետո ռազմական նախարարի միջնորդությամբ Նախարարների խորհուրդը կամ խորհրդարանը ներման կարգով կարող էր վերացնել կամ մեղմացնել դատարանի նշանակած պատիժն այդ անձանց նկատմամբ, եթե նրանք պատերազմի դաշտում ցույց տային քաջություն և դրսևորեին առհասարակ զովելի վարք:

Դատական մարմինների ու արդարադատության ոլորտին առնչվող մարմինների պաշտոնյաների նշանակման իրավազորությունը միակ խորհրդարանական լիազորությունն էր, որը ձեռք բերեց հստակ, հանրապետական կառավարման ձևին համապատասխանող և իշխանությունների տարանջատման սկզբունքից բխող իրավական կարգավորում: Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 6-ին ընդունել է անմիջապես դատարանակազմությանը և դատավարությանը վերաբերող հինգ օրենք<sup>14</sup>: Այդ օրենքներից մեկն ուներ «Մի քանի փոփոխությունների մասին դատաստանական կանոնադրության մեջ» վերտառությունը: Այդ օրենքը դատական գերատեսչության պաշտոնատար անձանց նշանակման և արձակման հին կարգը հարմարեցնում էր հանրապետության առանձնահատկություններին: Այն սահմանում էր, որ Հայաստանի սենատի (վճռաբեկ դատարանի) նախագահին, սենատի անդամներին ու ավագ դատախազին, պալատների նախագահներին ու սրանց օգնականներին, դատական պալատի (վերաքննիչ դատարանի) ու շրջանային դատարանի անդամներին արդարադատության նախարարի ներկայացմամբ նշանակում է խորհրդարանը<sup>15</sup>: Այս օրենքի հիման վրա և՛ Հայաստանի խորհուրդը, և՛ Հայաստանի պառլամենտը կատարել են դատական և դատախազական պաշտոնյաների նշանակումներ<sup>16</sup>:

Հայաստանի խորհրդի մշտական հանձնաժողովները էական դեր էին խաղում խորհրդարանական վերահսկողության կառուցակարգում: Սակայն տեղերում վիճակն այնքան վատթար էր, որ նրանք իրենց փոքրաթիվ անձնակազմով ուղղակի չէին կարողանում տանել այդ ծանրաբեռնվածությունը, հատկապես որ նրանց հանձնարարվում էր իրականացնել վե-

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, ք. 321:

<sup>14</sup> Այդ օրենքներն էին՝ «Վարչական գործերին վերաբերվող դատարանների մասին», «Սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում», «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին», «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա», «Մի քանի փոփոխությունների մասին դատաստանական կանոնադրության մեջ» (տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», Եր., 1918, հոդվածներ՝ 48, 49, 50, 51, 52, 53, էջ 27-31):

<sup>15</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918 թ., հոդված 52, էջ 30:

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», Եր., 1919 թ., հոդվածներ՝ 110, 111, 112, ինչպես նաև՝ «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու», հրատ. պառլամենտի, Եր., 1919 թ., հոդվածներ՝ 9, 10, 76 և այլն:

րահսկողական այցեր, ստուգումներ և այլն: Այդ վիճակից դուրս գալու ելքը խորհրդարանը գտավ հատուկ մշտական հանձնաժողովի ստեղծմամբ, հանձնաժողով, որ կոչվում էր քննիչ (երբեմն նաև խորհրդարանական կամ հարցապնդումների): Այն դեպքերում, երբ խնդիր էր առաջանում տեղում ստուգելու գործերի վիճակը, դա հանձնարարվում էր մշտական քննիչ հանձնաժողովին: Երբեմն էլ հարցապնդումների վերաբերյալ կառավարության պատասխանները չէին բավարարում պատգամավորներին և պարսավանքի բանաձևերից խուսափելու համար կայացվում էր որոշում՝ հարցապնդմամբ բարձրացված խնդիրների ստուգումը հանձնարարել քննիչ հանձնաժողովին: Քննիչ հանձնաժողովը, ի տարբերություն այլ հանձնաժողովների, ձևավորված էր այլ հիմունքներով. նրա կազմում կար չորս անդամ՝ մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր կուսակցական ֆրակցիայից<sup>17</sup>: Հենց այդ հանձնաժողովն էր, որ, 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ստուգելով Էջմիածնի գավառի իրավիճակը, իր զեկուցմամբ կառավարական ճգնաժամ առաջացրեց, իսկ կառավարող կուսակցությունը մի կերպ խուսափեց պարսավանքի բանաձևից: Դրա հետևանքը եղավ կոալիցիայի անհրաժեշտության մասին խորհրդարանի որոշումը և հետո բուն կոալիցիան՝ Հայ հեղափոխական դաշնակցության և Հայ ժողովրդական կուսակցությունների միջև:

1918 թ. հոկտեմբերի 18-ին քննիչ հանձնաժողովը՝ զեկուցելով Էջմիածնի շրջանի դրության մասին, խորհրդարանին ներկայացրեց բազմաթիվ փաստեր և փաստաթղթեր, «որոնք ապացուցանում են, որ մեր երկրում տիրում է կատարյալ քաոս, անարխիա և չի հաստատված տարրական իրավակարգ: Ավազակները, թալաններն ու կողոպուտները մնում են անպատիժ, իսկ բողոքողներին անխնա ծեծում են և բանտարկում»<sup>18</sup>: Իրավիճակը շտկելու համար հանձնաժողովն անում է մի շարք առաջարկություններ: Դաշնակցությունը մի կերպ կարողացավ ճողոպրել պարսավանքի բանաձևից, քանի որ 17 ձայնով ընդունվեց որոշում, համաձայն որի «խորհուրդը հանձնաժողովի առաջարկները հանձնում է համապատասխան հանձնաժողովներին ու անցնում է օրակարգի մյուս հարցերին»: Սակայն քննիչ հանձնաժողովին բնորոշ գործառույթներ կատարում էին նաև մշտական հանձնաժողովները: Այսպես, 1919 թ. դեկտեմբերի 27-ին հարցապնդման կապակցությամբ մտքերի փոխանակությունից հետո խորհրդարանն ընդունեց դաշնակցական ֆրակցիայի բանաձևը. «Լսելով հարցապնդումը և պարենավորման մինիստրի զեկուցումը՝ խորհրդարանը հանձնարարում է պարենավորման հանձնաժողովին քննել պարենավորման բաժանմունքի հաշիվները և զեկուցել խորհրդարանին»<sup>19</sup>: Բայց քանի որ տեղերում չարաշահումներն ու ապօրինությունները բազմաթիվ էին, իսկ խորհրդարանին հասնող բողոքների և զանգատների քանակը ահռելի՝ ուստի 1918 թ. աշնանից խորհրդարանն անցավ ժամանակավոր

<sup>17</sup> Տե՛ս «Ձանգ», թերթ, Եր., 1918, 9 հոկտեմբեր, թիվ 60(78). «Հայաստանի խորհրդարան (ամսական համառոտ տեսություն)»:

<sup>18</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը» («Կառավարության լրագրեր», պաշտոնաթերթ, Եր., 1918, թիվ 15):

<sup>19</sup> «Հայաստանի խորհրդի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը» («Ձանգ», թերթ, 1919, հունվար, թիվ 6):

քննիչ հանձնաժողովների ստեղծման պրակտիկային: Օրինակ՝ Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 25-26-ի նիստերի օրակարգում ներառված էր «Ղարաքիլիսա պառլամենտական հանձնաժողով ուղարկելու հարցը»<sup>20</sup>:

Քննիչ ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծվել են նաև առանձին նախարարությունների՝ խորհրդարանին տված զեկույցների կապակցությամբ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստում խորհրդարանը կայացրել է հետևյալ որոշումը. «Լսելով Հայաստանի հանրային խնամատարության մինիստրի զեկույցումը Սուրմալու և Ղամարլու վերադարձող գաղթականության դրության մասին, Հայաստանի խորհուրդը որոշեց հիշյալ շրջանները մի-մի հանձնախումբ ուղարկել տեղն ու տեղը ծանոթանալու և խորհրդարանին զեկույցանելու համար»<sup>21</sup>: Հաջորդ նիստում խորհրդարանը քննել է այդ հանձնաժողովների լիազորությունների հարցը: Խորհրդարանը վիճաբանությունների արդյունքում ընդունել է որոշում այն մասին, որ հիշյալ «հանձնաժողովներն իրավունք ունեն տեղում անել կարգադրություններ կառավարության միջոցով»<sup>22</sup>: Հայաստանի խորհրդում 1919 թ. առաջին կեսին քննիչ հանձնաժողովների ստեղծման պրակտիկան զարգացում չստացավ, որովհետև ըստ էության խորհուրդն արդեն անդամալույծ մարմին էր դարձել:

Հայաստանի պառլամենտում ևս քննիչ հանձնաժողովները չծավալվեցին կառավարող կուսակցության գերիշխանության պատճառով: Սակայն դրանք այնուամենայնիվ ստեղծվում էին: Այսպես, ինչպես 1918 թ., այնպես էլ 1919 թ. Դիլիջանի գավառից ստացվում էին բազմաթիվ դիմումներ և բողոքներ տեղի վարչական մարմինների գործունեության ու ժողովրդի ծանր վիճակի մասին: Ուստի պառլամենտը որոշեց ստեղծել և Դիլիջան ուղարկել ժամանակավոր քննիչ հանձնաժողով, որը 1919 թ. դեկտեմբերի 29-ի նիստում խորհրդարանին զեկույցել է իր կատարած աշխատանքի արդյունքների մասին: Ձեկույցը կազմելու համար հանձնաժողովը հանգամանորեն հետազոտել էր գավառի տնտեսական դրությունը, վարչական իշխանության կառույցը և գործունեությունը, դպրոցական գործը»<sup>23</sup>:

Արդարադատության ոլորտում պետական իշխանության բարձրագույն մարմիններին (օրենսդիր կամ գործադիր, միապետ) բնորոշ լիազորություններից է ներման իրավունքը, որը, որպես կանոն, պետությունների մեծագույն մասում վերապահված է պետության գլխին: Ներման իրավունքը խորհրդարանին վերապահելը, սովորաբար, բացառություն է և հազվադեպ հանդիպող:

<sup>20</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 25-ի և 26-ի նիստի արձանագրությունը» («Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918, նոյեմբեր, թիվ 17):

<sup>21</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստի արձանագրությունը» («Ձանգ», թերթ, 1919, հունվար, թիվ 2):

<sup>22</sup> Որոշումից բխում է, որ խորհրդարանում հանձնաժողովին նաև գործադիր լիազորություններ վերապահելու առաջարկ է եղել, ինչը, սակայն, չի անցել (տե՛ս «Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի արձանագրությունը». «Ձանգ», թերթ, 1919, հունվար, թիվ 2):

<sup>23</sup> Տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը». «Յառաջ», թերթ, Եր., 1920, հունվար, թիվ 4: Նույնպիսի հանձնաժողով ուղարկվել էր նաև Էջմիածին, որը ևս նույն օրը զեկույցել է խորհրդարանին Էջմիածինի կացության մասին (տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը». «Յառաջ», թերթ, 1920, հունվար, թիվ 4):

Առաջին հանրապետությունում ներման գործընթացը սկզբնական շրջանում թափ առավ կոալիցիոն կառավարության արդարադատության նախարարությունում՝ նախարար Ս. Հարությունյանի պաշտոնավարության օրոք (1919 թ. նոյեմբերի 4-ից): Այդ գործընթացը մեծ նշանակություն ունեցավ հատկապես ռազմահեղափոխական տրիբունալների և զանազան ռազմական դատարանների ակնհայտ ապօրինի դատավճիռներով դատապարտված կամ չափից դուրս խիստ պատիժ ստացած անձանց նկատմամբ արդարությունը վերականգնելու գործում: Սակայն հետագայում ներման ընթացակարգը վերածվեց իսկական շիլաշփոթի, որովհետև դարձավ զանգվածային գործընթաց, հատկապես որ չկար միասնական կարգ ներման կամ պատիժը մեղմացնելու գործերով վարույթի հարուցման և ընթացքի մասին: Կայսերական օրենսդրության համաձայն՝ ներման գործերով վարույթը վարում էր արդարադատության նախարարությունը, մասնավորապես նրա դիվանը<sup>24</sup>: Համաձայն 1906 թ. ապրիլի 23-ի «Ռուսական կայսրության հիմնական պետական օրենքների»՝ դատապարտվածների ներումը կայսեր բացառիկ իրավունքն էր<sup>25</sup>: Այդպիսով, «ի բացառություն գործող օրենքների՝ կայսեր ներողամտությունը» հայցելու խնդրագիրն ուղարկվում էր կայսերական գրասենյակ: Ստանալով խնդրագիրը, կայսերական գրասենյակը հաղորդում էր ուղարկում արդարադատության նախարարության դիվանի առաջին դեպարտամենտին այն մասին, որ ընդունված է ներման խնդրագիր: Դրա հիման վրա դեպարտամենտը նախապատրաստում էր ներում հայցողի գործը և ներկայացնում այն կայսերական գրասենյակին: Առաջին հանրապետությունում առաջացավ իրավական կարգավորման հիմնախնդիր՝ ո՞վ էր իրականացնելու կայսրին վերապահված ներման իրավունքը: Հիմնախնդրի լուծումը եղավ այն, որ ներման իրավունքը «յուրացրեց» խորհրդարանը՝ Հայաստանի խորհուրդը: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներման խնդրագրերն ընդունում էին և՛ անմիջապես խորհրդարանը, և՛ արդարադատության նախարարությունը: Ինչպես երևում է Հայաստանի խորհրդի, Նախարարների խորհրդի և պառլամենտի օրակարգերի ուսումնասիրությունից, այդպիսի խնդրագրերը բավականին շատ էին և ծանրաբեռնել էին օրենսդիր մարմնի առանց այդ էլ գերծանրաբեռնված աշխատանքը: Եթե միջնորդագիրը ստանում էր արդարադատության նախարարությունը, ապա նա ներման կամ պատիժը մեղմացնելու վերաբերյալ միջնորդագրերը դատարանների դատավճիռների հետ միասին նախ ներկայացնում էր Նախարարների խորհրդին, որտեղ դրանք քննարկվելուց հետո, եթե հավանության էին արժանանում, ուղարկվում էին օրենսդիր մարմնի դիվան՝ ընթացք տալու համար: Օրինակ՝ 1920 թ. հունվարի 9-ին Նախարարների խորհուրդն իր նիստում լսել է արդարադատության նախարարի զեկուցումը քրեական պատժագրքի 1455 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով դատապարտված Շիպուլինովային ներում շնորհելու մասին և որոշում է կայացրել «Հավանություն տալ և ներկայացնել պառլամենտ ի հաստատություն»<sup>26</sup>: Դրա հիման վրա պառլա-

<sup>24</sup> Տե՛ս "Свод законов Российской империи". Т. 1, книга 5, СПб., 1910, "Учреждение министерства юстиции", էջ 224, հոդ. 775:

<sup>25</sup> Տե՛ս "История государственного управления в России". Ростов-на-Дону, 2005, էջ 290:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 21:



մենտը 1920 թ. մարտի 5-ին ընդունել է օրենք «Ելենա Շիպուլինովային ներում շնորհելու մասին»<sup>27</sup>: Նախարարների խորհրդին կից իրավաբանական խորհրդատվություն ստեղծելուց հետո որոշ դեպքերում այդպիսի միջնորդագրերը հանձնվում էին իրավաբանական խորհրդատվության եզրակացությանը, այնուհետև՝ հաստատվում կառավարության կողմից և ուղարկվում խորհրդարան: Օրինակ՝ 1919 թ. սեպտեմբերի 7-ին արդարադատության նախարարը կառավարության նիստում զեկուցել է Սկրտիչ Դարբինյանի ներման գործի մասին: Կառավարության որոշումը շարադրված է հետևյալ կերպ. «Հավանություն տալ իրավաբանական խորհրդատվության եզրակացությանը և զեկուցումը ներկայացնել պառլամենտ ի հաստատություն»<sup>28</sup>: Արխիվային փաստաթղթերի հետազոտությունը ցույց է տալիս, որ և՛ Հայաստանի խորհրդին, և՛ Հայաստանի պառլամենտին ուղղված ներման կամ պատիժը մեղմացնելու վերաբերյալ խնդրագրերն այնուհետև ուղարկվում էին արդարադատության նախարարություն՝ եզրակացություն տալու համար, իսկ վերջինս դրանք ուղարկում էր Երևանի շրջանային դատարանի դատախազին՝ ըստ գործի նյութերի զեկուցագիր-եզրակացություն կազմելու համար:

Ինչպես տեսանք, դատապարտվածների ներման միասնական կարգ գոյություն չուներ: Ներման գործերն անցել են տարբեր ընթացակարգեր: Ակնհայտ էր, որ ներման գործերի վարույթը պետք է ենթարկվեր միասնական իրավական կարգավորման: Որպես այդ կարգավորման միասնականացման միջոց՝ 1919 թ. աշնանը խորհրդարանի հանձնարարությամբ օրենսդրական հանձնաժողովը մշակել և խորհրդարանին օրենսդրական նախաձեռնության կարգով առաջարկել էր օրինագիծ «Դատարանով դատապարտվածներին ներում շնորհելու կարգի մասին»<sup>29</sup>: Օրինագիծը Հայաստանի պառլամենտի աշխատանքները թեթևացնելու նպատակով որոշ սահմանափակումներ էր առաջարկում ներում հայցողների համար: Ներում կարող էին հայցել իրավագրկման (ազատագրկման) և ծանր պատիժների դատապարտվածները՝ զինվորականները՝ զինվորական նախարարի միջոցով, իսկ քաղաքացիական անձինք՝ արդարադատության նախարարի միջոցով<sup>30</sup>: Օրինագծի քննարկումը Հայաստանի պառլամենտի նիստերում տեղիք տվեց բուռն վիճաբանությունների. հետևանքը եղավ այն, որ ամբողջ օրինագիծը երրորդ ընթերցմամբ մերժվեց: Պատգամավորների մեծ մասը համաձայն չէր օրենսդրական հանձնաժողովի փաստարկներին, օրինակ՝ պատգամավոր Ա. Հովհաննիսյանի կարծիքով. «Թվում է, թե օրենսդրական

<sup>27</sup> Ե. Շիպուլինովան դատապարտվել էր Երևանի շրջանային դատարանի 1919 թ. դեկտեմբերի 15-ի դատավճռով՝ երկու և կես տարվա բանտարկության (տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու», հրատարակություն պառլամենտի, 1920 թ., մարտի 30, եր., թիվ 4, հոդված 37, էջ 25):

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 47: Այդ զեկուցման հիման վրա արդեն 1919 թ. սեպտեմբերի 19-ին խորհրդարանը որոշել է «Չիբուխու գյուղացի Սկրտիչ Դարբինյանի տասը տարվա տաժանակիր աշխատանքի պատիժը փոխարինել մեկ ու կես տարվա բանտարկությամբ, առանց իրավունքներից զրկելու և պատժի ժամանակամիջոցը 1918 թ. սեպտեմբերի 15-ից հաշվելով՝ այսինքն զինվորաշրջանային դատարանի տրիբունալի դատավճիռն ուժի մեջ մտնելու օրից» («ՀՀ օրենքների հավաքածու», հրատ. պառլամենտի, 1919 թ., նոյեմբերի 7, եր., թիվ 2, հոդված 22, էջ 16):

<sup>29</sup> «Յառաջ», թերթ, եր., 1919, թիվ 56, էջ 3:

<sup>30</sup> Տե՛ս «Հայաստանի Պառլամենտի 1919 թ. նոյեմբերի 24-ի՝ 38-րդ նիստի արձանագրությունը» («Յառաջ», թերթ, 1919, թիվ 57, էջ 3):

հանձնաժողովի աշխատանքների շատությունը հաշվի առնելով նկատի է ունեցել միայն իր դրությունը: Մյուս կողմից, աչքի առաջ պետք է ունենալ, որ խորհրդարանը չի կարելի պատել չինական պարիսպներով և կտրել ժողովրդից: Ժողովուրդը բոլոր դեպքերում հնարավորություն և իրավունք պիտի ունենա դիմելու խորհրդարանին»<sup>31</sup>: «Դատարանով դատապարտվածներին ներում շնորհելու կարգի մասին» օրինագծի մերժումով իրավիճակը մնաց նույնը: Դրա հետևանքով խորհրդարանը կարծես թե վերածվել էր յուրատեսակ դատական նոր ատյանի: Այսպես, Հայաստանի խորհուրդը 1919 թ. իր չորս ամսվա գործունեության ընթացքում ընդունել է 4 լրիվ ներման կամ պատիժը մեղմացնելու մասին «օրենքներ»<sup>32</sup>: Հայաստանի պառլամենտը 1919 թ. օգոստոսից մինչև տարվա վերջ ընդունել է 9 ներման կամ պատիժը մեղմացնելու մասին «օրենքներ», իսկ 1920 թ. առաջին հինգ ամիսների ընթացքում` 11 նմանօրինակ «օրենքներ»: Այսպիսով, միայն օրենսդիր մարմիններն ընդունել են 24 ներման կամ պատիժը մեղմացնելու մասին «օրենքներ»: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նմանօրինակ «օրենքներ» ընդունում էին նաև օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունները` 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը, ինչպես նաև 1920 թ. մայիսի 5-ից մինչև Հայաստանի Հանրապետության անկումն ընկած ժամանակամիջոցներում:

Այսպիսի իրավիճակը դժգոհություն էր առաջ բերում ոչ միայն խորհրդարանում` պատգամավորների շրջանում, օրենսդրական հանձնաժողովում, այլ նաև դատական իշխանության պաշտոնյաների շրջանում: Ներման կամ պատիժը մեղմելու խնդրագրերն այնքան շատ էին, որ Երևանի շրջանային դատարանի դատախազը 1920 թ. մարտի 24-ին այս հարցի վերաբերյալ զեկույց է ուղղել արդարադատության նախարարին` Ա. Զիլինգարյանին, և նրա միջոցով` խորհրդարանի օրենսդրական հանձնաժողովին, որում արվում էին գուցե խիստ, բայց, մեր կարծիքով, շատ տեղին դիտողություններ. «Իր վերածնության ճանապարհին հայ ժողովուրդը պատահում է մի շարք խոչընդոտների: Դրանցից մեկը հանցագործությունն է, որն օրեցօր մեծանալով հսկայական չափերի է հասնում և հրեշավոր կերպարանք ստանում: Երկրի քայքայումը մեծացնում է հանցագործությունը, իսկ հանցագործությունն էլ իր կողմից նպաստում է քայքայմանը: Այս երկու երևույթը միասին անտանելի են դարձնում մեր կյանքը... Կառավարությունը` իբրև երկրում կարգ հաստատող, պետք է ամեն ջանք գործի դնի հանցագործության դեմ կռվելու համար, և նրա գլխավոր անելիքը պիտի լինի` հասարակության միջից հանել հանցավոր տարրերին: Այս նպատակին պիտի ծառայեն վարչությունն ու դատարանը... Դատարանի գործունեությանը պետք է հարգանքով վերաբերվել և ամեն կերպ աշխատել պաշտպանել ու զորացնել նրա հեղինակությունն ու նշանակությունը: Եվ եթե դատարանն այս կամ այն վճիռն է դնում, պետք է կատար ածել այդ անհողող և առանց որևէ շե-

<sup>31</sup> «Յառաջ», թերթ, 1919, թիվ 57, էջ 3, «Հայաստանի խորհրդարանի 39-րդ նիստը, նոյեմբերի 25»:

<sup>32</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1919 թ., հոդվածներ 90, 101, 102, 103:

ղումների ու ուղղումների: Ամեն փոփոխություն վայր է ձգում դատարանի հեղինակությունը և նշանակությունը... Այժմ այնպիսի դրություն է ստեղծվել, որ ամեն դատապարտյալ, որ հնարավորություն ունի արտասովալից խնդիր գրելու, կարող է աչքի առաջ ունենալ ոչ միայն դատարանի որոշած պատժի թեթևացումը, այլ նույնիսկ և այն, թե բոլորովին կազատվի պատժից... Մինչդեռ կան բազմաթիվ հանգամանքներ, որոնք մեղմացնում են դատապարտյալների վիճակը և օրենքով նախատեսված են... Այս պատճառով կարծում են, որ ոչ մի հիշատակություն կուսակցական գործունեության մասին չպետք է ծառայի, որ մարդասպանության և հափշտակության համար դատապարտվածն ազատվի պատժից (տե՛ս Ս. Յովսեփյանի խնդրագիրը): Բանտում պատիժը կրելու փոխանակ՝ բանակի շարքերում ծառայելու ցանկությունը, որ հաճախ հայտնում են պատժապարտները, չի կարող հարգվել, քանի որ զորաբանակը հասարակության տակաճյուղերի տեղը չէ: Եվ քրեական գործերով դատապարտվածների ամեն մի դիմումը խորհրդարանին ներում խնդրելու համար ոչ միայն անցանկալի է, այլև ուղղակի անթույլատրելի: Նրանց վաղակետ արձակման մասին միայն կարելի է խնդրարկություն անել, և այդ պիտի անեն ոչ թե իրենք դատապարտյալներն, այլ բանտային վարչությունն, որովհետև պատժի գլխավոր նպատակն է ուղղումը, իսկ այս մասին կարող է դատել ոչ թե ինքը դատապարտյալն, այլ ուրիշները»<sup>33</sup>:

Եթե խորհրդարանի և կառավարության «քթի տակ» գործող շրջանային դատարանի դատախազը, որն, ի դեպ, չունեի անփոփոխելիության իրավունք, նման համարձակ զեկույցով դիմում էր նախարարին՝ հասկանալով դրա սպառնալից հետևանքները իր համար, ուրեմն իսկապես ներման հարցում նախարարությունը և խորհրդարանը «համը հանել» էին, չարաշահումներն ու շահարկումները չափից դուրս շատ էին: Այդպիսի գործելակերպով խորհրդարանն իրեն վերածեց «քվազի դատարանի», որը, բացառելով բոլոր օրենքները, իրականացնում էր արդարադատություն: Եթե խոսքը միայն ներման կամ պատիժը մեղմելու մասին լիներ, միգուցե կարելի կլիներ հաշտվել իրավիճակի հետ՝ համարելով դա սովորական երևույթ: Բայց խորհրդարանի ընդունած ներման «օրենքների» շարքում առանձնանում է մի նախադեպ, որը շատ յուրօրինակ է: Դա 1919 թ. օգոստոսի 29-ի նիստում կայացված Վաղարշապատի բնակիչ Դ. Բրուտյանի գործի վերաքննության մասին որոշումն է, որով պառլամենտը սահմանում էր «որ դատական իշխանությունը վերաքննե Վաղարշապատի բնակիչ և 1918 թ. մարտի 27-ին Էջմիածնի զինվորայեղափոխական դատարանի վճռով տաժանակիր աշխատանքների դատապարտված Դրաստամատ Բրուտեանի գործը»<sup>34</sup>: Այդ նախադեպով փաստորեն Հայաստանի պառլամենտը, պարտադրելով դատական իշխանությանը վերաքննել քրեական գործը, իրեն վերածեց վճռաբեկության իրավագործյամբ օժտված խորհրդարանի, այսինքն՝ «քվազի դատարանի»:

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 56, թթ. 3-4:

<sup>34</sup> «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու», հրատ. պառլամենտի, Եր., 1919 թ., նոյեմբերի 3, թիվ 1, հոդված 6, էջ 3:

Այսպիսով, խորհրդարանագիտության մեջ հայտնի արդարադատության ոլորտին առնչվող խորհրդարանական բոլոր հնարավոր լիազորություններից Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարաններն համանմանության կարգով իրենց միանշանակորեն վերապահել էին համաներում հայտարարելու իրավունքը, ինչպես նաև՝ դատական մարմինների ու արդարադատության ոլորտին առնչվող մարմինների պաշտոնյաների նշանակման իրավազորությունը: Վերջինը 1918 թ.-ից ուներ հստակ օրենսդրական ամրագրում: Երկու խորհրդարանների պրակտիկայում չի կիրառվել իմպիչմենտի ինստիտուտը: Խորհրդարանների գործունեությունը հետազոտելիս հանդիպում ենք քննիչ (վերստուգող) հանձնաժողովների ստեղծման դեպքերի: Այդ հանձնաժողովները չէին հարուցում մեղադրանք, այլ ստուգման նյութերը համապատասխան հիմքերի առկայության դեպքում ուղարկում էին դատախազական մարմիններին՝ ընթացք տալու համար: Այդ ընթացակարգը կարգավորում էր խորհրդարանի կանոնակարգը: Իրավական համակարգի անցումային բնույթը և իրավական կարգավորման բացերի առկայությունը հետազոտվող հիմնահարցերում հանգեցրեցին այն բանին, որ խորհրդարաններն Առաջին հանրապետությունում իրենց վերապահեցին նաև ներման իրավունքը, որն այլ պայմաններում, որպես կանոն, պատկանում է պետության գլխին: Ներման ընթացակարգի կենտրոնացումը խորհրդարանում, պայմանավորված դրա զանգվածային բնույթով, օրենսդիր իշխանության մարմինը վերածեցին յուրահատուկ «քվազի դատարանի», ինչը հաստատվում է ոչ միայն ներման անհատական օրենքների ընդունմամբ, այլ նաև որոշ գործերով դատավճիռների «վճռաբեկության» որոշումներ կայացնելու փաստով: Այս ամենը հիմք է տալիս հաստատելու, որ Առաջին հանրապետության խորհրդարանը պետական իշխանության համակարգում իր դերով համարվում էր **բացարձակապես գերիշխող խորհրդարան**, իսկ իր իրավասության ծավալով՝ **բացարձակապես անորոշ իրավասությամբ խորհրդարան**, որն իր օրենսդրական գործունեության մեջ կաշկանդված չէր սահմանադրական ինչ-որ ակտերով: Արդյունքում խորհրդարանն իրեն վերագրել էր անսահմանափակ իրավունքներ. ցանկացած հարցով կարող էր ընդունել, փոփոխել և վերացնել օրենքներ, և չկար պետական որևէ կառույց, որը կարող էր կասկածի ենթարկել նրա ակտերի իրավականությունը և սահմանադրականությունը:

**АРТУР ВАГАРՇЯН – Компетенция парламентов первой Республики Армения в области правосудия.** – Из полномочий в области правосудия, известных парламентам, оба парламента первой Республики Армения в порядке аналогии присвоили себе право объявлять амнистию, а также назначать некоторых должностных лиц "судебного ведомства". В практике обоих парламентов институт импичмента не применялся, но встречаются случаи создания следственных комиссий. Эти комиссии не возбуждали обвинения, а материалы проверок в случае соответствующих оснований направляли органам прокуратуры. Эту процедуру регулировал регламент парламента. Переходное состояние правовой системы и пробелы в правовом регулировании привели к тому, что парламента первой республики присвоили себе право помилования, которое в обычных условиях

принадлежит главе государства. В условиях массовых обращений это превратило законодательный орган в особую квазисудебную инстанцию. Парламенты принимали не только индивидуальные законы о помиловании, но также решения о кассации судебных приговоров. Таким образом в государственной системе первой Республики Армения парламент стал абсолютно главенствующим органом с абсолютно неопределенной компетенцией: в своей деятельности он не был связан никакими конституционными актами, присвоил себе неограниченные права, по любым вопросам мог принимать, изменять и упразднять законы, и никакой государственный орган не мог подвергнуть сомнению правозаконность и конституционность его актов.

**ARTHUR VAGHARSHYAN – *The Authority of the Parliaments of the First Republic of Armenia in the Field of Justice.*** – Both the parliaments of The First Republic of Armenia had reserved for themselves the right to amnesty by analogy, as well as the appointment authority of the officials in bodies of judicial power from all possible parliamentary authorities related to the field of justice known in Parliamentology. There was no impeachment implementation in both parliaments. Studying the activity of the parliaments, one can notice some cases of investigating commissions' establishment. However, those commissions did not excite accusation, but in cases of the existence of appropriate grounds the tested materials were sent to the prosecuting bodies. Those processes were regulated by the Statute of the Parliament. The transitional nature of the legal system and the existence of gaps in legislation lead to the fact that the Parliaments of the First Republic of Armenia reserved for themselves the right to Pardon: a power, which was owned, as a rule, by the head of the state in other circumstances. The centralization of Pardon in the hands of the Parliament, being determined by the nature of its mass, made the legislative body a specific quasi-court. This conclusion is based on the fact that Parliaments not only adopted individual laws on Pardon, but also stipulated appeal decisions on court verdicts in some cases. These all give us grounds for the confirmation that the Parliament of the First Republic was considered as absolutely ruling parliament upon executive and judicial powers in the system of state bodies by its role, and a parliament with absolutely uncertain authority by the scope of the authority, which was not limited in its legislative functions by any constitutional act, reserved for itself unlimited rights, was able to accept, change and eliminate laws concerning any issue, and there was no institution (including judicial) that could doubt the legal nature and constitutionality of its acts.